Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աշտարակ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացն իրականացնելու, գործընթացի համակարգող հանձնաժողովի՝ աշխատանքների մեկնարկի նիստի

ք. Աշտարակ **02.02.2026թ. ժամը 12:00**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Սամվել Սահակյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Իշխան Բարսեղյան

Հանձնաժողովի անդամներ՝

Անուշ Արամյան, Նվեր Մուրադյան, Նանա Մաթևոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Անահիտ Համբարձումյան

Հանձնաժողովի աշխատանքների ադմինիստրատիվ և կազմակերպչական մասը, ինչպես նաև նիստերի արձանագրումն ապահովելու համար հանձնաժողովի քարտուղար է ընտրվել հանձնաժողովի անդամ **Անահիտ Համբարձումյանը**:

Աշտարակ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացն իրականացնելու նպատակով գործընթացի համակարգող հանձնաժողովն աշխատանքները մեկնարկեց 2026 թվականի փետրվարի 2-ին, ժամը 12:00-ին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ հանձնաժողովի նախագահ Սամվել Սահակյանը: Նիստի սկզբում նա հանձնաժողովի անդամներին մանրամասն ներկայացրեց 2025 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև կառուցված ֆուտբոլի խաղադաշտերի լուսանկարները:

Սամվել Սահակյանը հանձնաժողովի անդամներին ծանոթացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 26-ի թիվ 197-Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովի աշխատակարգին, մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցին, առաջարկների հայտի, յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվությունների ձևաթղթերին:

Ելույթներով հանդես եկան, իրենց գոհունակությունը հայտնեցին և առաջիկա անելիքների մասին քննարկումներ իրականացրեցին նիստին ներկա հանձնաժողովի անդամները:

Նիստի ավարտին հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ժամանակացույցով հաստատված՝ բնակչության իրազեկման փուլի ժամկետները և հայտարարեց աշխատանքների մեկնարկը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Սամվել Սահակյան**

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ _____ **Իշխան Բարսեղյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Անուշ Արամյան**

_____ **Նվեր Մուրադյան**

_____ **Նանա Մաթևոսյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Անահիտ Համբարձումյան**